

«ՀԱՄԱՉԱՅՆԵՑՎԱԾ Է»

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ վարչության
« 16 » փետրվարի 2007թ.
թիվ 01/34-115L որոշմամբ
վարչության նախագահ՝

Ա.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Խորհրդի
« 17 » փետրվարի 2007թ.
թիվ 31L որոշմամբ
Խորհրդի նախագահ՝

Կ. ՍԱՖԱՐՅԱՆ _____



«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

**ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ	3
Գլուխ 2. Շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները	3
Գլուխ 3. Շահութաբաժինների վճարման պայմանները	3
Գլուխ 4. Շահութաբաժինների չափերի որոշումը	3
Գլուխ 5. Շահութաբաժինների վճարման սահմանափակումները	4
Գլուխ 6. Շահութաբաժինների վճարման մասին որոշում ընդունելու կարգը	5
Գլուխ 7. Շահութաբաժինների վճարման ժամկետները	5
Գլուխ 8. Շահութաբաժինների վճարման կարգը	6
Գլուխ 9. Շահութաբաժնային քաղաքականությունը 2007-2008թթ.	6

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Արդշինհինվեստբանկ» ՓԲԸ շահութաբաժնային քաղաքականությունը (այսուհետ՝ Շահութաբաժնային քաղաքականություն) մշակված է՝ համաձայն ՀՀ օրենսդրության և «Արդշինհինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության:

1.2. Սույն փաստաթղթով սահմանվում են Շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները, Բանկի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման պայմանները, շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգը, այդ թվում՝ վճարման ժամկետները, վայրը և ձևը:

1.3. Շահութաբաժնային քաղաքականությունը հանդիսանում է Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի անբաժանելի մասը:

1.4. Շահութաբաժնային քաղաքականությունը, դրանում կատարվող փոփոխությունները Բանկը տեղադրում է իր ինտերնետային կայքում՝ Բանկի կողմից սահմանված կարգով:

1.5. Բանկը հրապարակում է (այդ թվում՝ Բանկի ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով) Բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշման մասին տեղեկատվություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 2. ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Շահութաբաժնային քաղաքականությունն իրենից ներկայացնում է Բանկի շահույթի կառավարման ընդհանուր քաղաքականության մի մասը, որը կայանում է Բանկի շուկայական արժեքն առավելագույնի հասցնելու նպատակով շահույթի սպառվող և կուտակվող մասերի միջև լավագույն համամասնությունների որոշման մեջ:

2.2. Շահութաբաժնային քաղաքականությունը հիմնվում է Բանկի շահութաբաժինների չափերը որոշելիս՝ ներդրումների գրավչության, Բանկի ֆինանսական կայունության, կապիտալացման և իրացվելիության բարձրացման, Բանկի և նրա բաժնետերերի շահերի հավասարակշռվածության, ներդրված կապիտալի շուկայական շահութաբերության ապահովման, բաժնետերերի իրավունքների պաշտպանության և նրանց բարեկեցության բարձրացման վրա:

2.3. Շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ՝ Ընդհանուր ժողով) իրավասությունն է, այլ ոչ թե՝ պարտականությունը:

2.4. Բանկի համար անկանխատեսելի բացասական իրավիճակների առկայության դեպքում Բանկի խորհուրդը պարտավոր է առաջարկել Ընդհանուր ժողովին՝ շրջանադառնալ շահութաբաժիններ վճարելու (հայտարարելու) մասին որոշում:

2.5. Շահութաբաժինների վճարման և դրանց չափերի մասին որոշում ընդունելու դեպքում հաշվի են առնվում Բանկի իրացվելիության ու վճարունակության ընթացիկ և կանխատեսվող մակարդակները, առնվազն առաջիկա մեկ տարվա ծրագրերը և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

2.6. Սույն փաստաթղթի 5-րդ գլխում նշված սահմանափակումների բացակայության դեպքում, Ընդհանուր ժողովի որոշման հիման վրա, Բանկը պարտավոր է ժամանակին և ամբողջությամբ վճարել հայտարարված շահութաբաժինները: Բանկը պատասխանատվություն է կրում բաժնետերերի առջև նշված պարտավորությունը չկատարելու համար՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

ԳԼՈՒԽ 3. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Բանկի բաժնետերերին շահութաբաժինների վճարման պայմաններն են՝
ա) Բանկում գուտ շահույթի առկայությունը, որը ստացվել է նախորդ ֆինանսական ժամանակաշրջանի (եռամսյակ, կիսամսյակ, տարի) արդյունքներով,

բ) շահութաբաժինների վճարման՝ սույն փաստաթղթի 5-րդ գլխով նախատեսված սահմանափակումների բացակայությունը,

գ) Բանկի խորհրդի որոշման առկայությունը, որը պարունակում է շահութաբաժինների չափերի և դրանց վճարման կարգի մասին առաջարկություն,

դ) Ֆինանսական ժամանակաշրջանի (եռամսյակ, կիսամսյակ, տարի) արդյունքներով առաջացած շահութաբաժինների վճարման (հայտարարման) մասին Ընդհանուր ժողովի որոշման առկայությունը:

Սույն փաստաթղթի իմաստով ֆինանսական ժամանակաշրջան է համարվում այն ժամանակաշրջանը, որի համար վճարվում են շահութաբաժինները:

ԳԼՈՒԽ 4. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

4.1. Շահութաբաժինները կազմում են Բանկի շահույթի մի մասը: Շահութաբաժիններն արտա-

հայտվում են մեկ բաժնետոմսին ընկնող դրամական գումարով:

4.2. Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ Բանկի բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են շահույթից՝ հարկերը վճարելուց հետո (գուտ շահույթ), որը հաշվարկվում է բանկերի՝ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

4.3. Նախորդ ֆինանսական ժամանակաշրջանի (եռամսյակ, կիսամյակ, տարի) արդյունքներով մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող շահութաբաժնի չափը որոշվում է՝ որպես հասարակ բաժնետոմսերի գծով վճարվող շահութաբաժինների գումարի և Բանկի կողմից տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի քանակի (շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակը կազմելու օրվա դրությամբ) հարաբերություն: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$C_{\text{a}} = C_{\text{p}} / P_{\text{hp}}$$

որտեղ՝ C_{a} - մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող շահութաբաժնի չափը,

C_{p} – տեղաբաշխված բոլոր հասարակ բաժնետոմսերի գծով վճարվող շահութաբաժինների ընդհանուր գումարը,

P_{hp} – Բանկի կողմից տեղաբաշխված բոլոր հասարակ բաժնետոմսերի ընդհանուր քանակը:

4.4. Բաժնետերերին վճարվող շահութաբաժինների ընդհանուր գումարը հաշվարկվում է հասարակ մեկ բաժնետոմսի շահութաբաժնի չափը բաժնետիրոջը պատկանող հասարակ բաժնետոմսերի քանակով բազմապատկելու միջոցով:

ԳԼՈՒԽ 5. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

5.1. Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ բաժնետերերին շահութաբաժիններ վճարելն արգելվում է, եթե այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված գուտ շահույթի գումարը:

5.2. Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

5.3. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

5.4. Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

5.5. Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

5.6. Շահութաբաժինների վճարման սահմանափակումները պայմանավորված են Բանկի ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշներով:

5.7. Բանկն իրավասու չէ կայացնել (հայտարարել) շահութաբաժիններ չվճարելու մասին որոշում, եթե Բանկի խորհրդի որոշման ընդունման օրը, որով տրվում է առաջարկություն շահութաբաժինների չափերի և դրանց վճարման կարգի մասին, կամ շահութաբաժինների վճարման (հայտարարման) մասին Ընդհանուր ժողովի որոշման ընդունման օրը (հաշվի առնելով շահութաբաժինների պլանավորված չափերը) առկա է կամ կարող է առաջանալ հետևյալ փաստերից որևէ մեկը.

- նախորդ կամ ընթացիկ ֆինանսական տարվա արդյունքներով ստացված գուտ շահույթի բացակայություն,
- ընթացիկ կամ նախորդ տարիների չծածկված վնասների կամ փաստացի օգտագործված շահույթը ստացված շահույթին գերազանցելու փաստի առկայություն,
- շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելու օրն առկա է կամ կարող է առաջանալ ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների չկատարելու փաստ:

5.8. Սույն գլխում նշված հանգամանքները վերացնելուց հետո՝ Բանկը պարտավոր է բաժնետերերին վճարել հայտարարված շահութաբաժինները:

ԳԼՈՒԽ 6. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՍԱՄԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1. Ընդհանուր ժողովն իրավունք ունի ընդունել որոշում եռամսյակային, կիսամյակային և տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

6.2. Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի

չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի խորհուրդը:

6.3. Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ Բանկի խորհրդի առաջարկությամբ:

6.4. Հաջորդ տարվա շահութաբաժինների (եռամսյակային, կիսամսյակային, տարեկան) վճարման պարբերականությունը որոշվում է հերթական տարեկան Ընդհանուր ժողովի կողմից:

6.5. Բանկի խորհուրդը շահութաբաժինների վճարման չափը որոշում է՝ ելնելով այն բանից, որ Բանկի հասարակ բաժնետոմսերի դիմաց նախատեսվում է շահութաբաժիններ վճարել Բանկի գործունեության առավել շահավետ ժամանակաշրջաններում՝ հաշվի առնելով, որ հեռանկարում Բանկի գուտ շահույթը բաշխելիս առաջնայնությունը տրվելու է դրա կապիտալացմանը (վերաֆինանսավորմանը):

6.6. Բանկի խորհուրդը շահութաբաժինների վճարման հնարավորությունը քննարկում է՝ ելնելով հետևյալ գործոններից.

- նախորդ ֆինանսական տարվա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից, որոնք հիմնված են Բանկի վարչության կողմից ներկայացված տարեկան ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա,
- ստացված գուտ շահույթի բաշխման վերաբերյալ Բանկի վարչության առաջարկություններից, այդ թվում՝ գուտ շահույթի այն մասի վերաբերյալ, որը նպատակահարմար է ուղղել Բանկի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարմանը: Բանկի վարչության այդ առաջարկությունները ձևավորվում են՝ հաշվի առնելով սույն փաստաթղթում արտացոլված պահանջները, Բանկի ընթացիկ ֆինանսական վիճակը, երկարաժամկետ հեռանկարային ռազմավարությունը, Բանկի հերթական ֆինանսական տարվա հեռանկարային զարգացման ծրագրում արտացոլված հեռանկարները:

6.7. Բանկի խորհուրդը քննարկում է գուտ շահույթի բաշխման վերաբերյալ Վարչության կողմից ներկայացված նյութերն ու առաջարկությունները, անհրաժեշտության դեպքում ճշգրտումներ է մտցնում գուտ շահույթի բաշխման ուղղություններում և ընդունում է վերջնական որոշում, որը պարունակում է Բանկի բաժնետոմսերի շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ առաջարկություններ՝ հաշվի առնելով ՀՀ գործող օրենսդրության և սույն փաստաթղթի պահանջները:

6.8. Նախորդ տարվա ֆինանսական ժամանակաշրջանի արդյունքների հիման վրա շահութաբաժինների վճարման (հայտարարման) վերջնական, այդ թվում՝ շահութաբաժնի չափի, շահութաբաժինների վճարման կարգի ու ձևի մասին որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովի կողմից:

6.9. Շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել Բանկի խորհրդի կողմից առաջարկված չափը:

6.10. Վճարվող շահութաբաժինների գումարը որոշվում է Բանկի խորհրդի կողմից՝ տարվա (եռամսյակի, կիսամսյակի) ֆինանսական գործունեության արդյունքների և սույն փաստաթղթի պահանջների հիման վրա:

6.11. Նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների հիման վրա շահութաբաժինների չափի վերաբերյալ Բանկի խորհրդի առաջարկությունը ներկայացվում է Բանկի բաժնետերերին՝ գործող օրենսդրությանը համապատասխան նրանց կողմից Ընդհանուր ժողովում վերջնական որոշում կայացնելու նպատակով:

6.12. Ընդհանուր ժողովում որոշում ընդունելու համար ներկայացված նյութերի կազմում պետք է ընդգրկված լինի շահութաբաժինների վճարման համար անհրաժեշտ պայմանների առկայության կամ բացակայության վերաբերյալ պահանջվող տեղեկատվություն:

6.13. Ընդհանուր ժողովն իրավունք ունի ընդունել որոշում շահութաբաժիններ չվճարելու մասին:

6.14. Բանկը հասարակ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին չի երաշխավորում հասարակ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները:

ԳԼՈՒԽ 7. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

7.1. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

7.2. Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Բանկի խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո:

7.3. Շահութաբաժիններ վճարելիս ոչ մի բաժնետեր վճարման ժամկետների առումով առավելություն չունի:

7.4. Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում շահութաբաժիններ չվճարվելու դեպքում՝ դրանք կուտակվում և վճարվում են հետագայում բաժնետիրոջ առաջին իսկ պահանջով:

7.5. Հայտարարված, սակայն սույն գլխի 7.1 և 7.2 կետերում նշված ժամկետը լրանալու, ինչպես նաև սույն փաստաթղթի 8.8 կետում նշված պատճառներով Բանկի բաժնետերերի կողմից չստացված

շահութաբաժինները համարվում են չպահանջված շահութաբաժիններ:

ԳԼՈՒԽ 8. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Բանկի խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

8.2. Բանկն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո՝ կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական հիմնադրամը՝ շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական հիմնադրամ:

8.3. Բանկի կողմից հայտարարված շահութաբաժինները վճարվում են ՀՀ դրամով:

8.4. Բանկի գործադիր մարմիններն ապահովում են բաժնետերերին շահութաբաժինների ժամանակին և ամբողջական վճարումը:

8.5. Բանկի բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են կանխիկ կամ անկանխիկ ձևով՝ գումարները նրանց բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

8.6. Ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջը շահութաբաժնի վճարում է համարվում Բանկի հաշվից համապատասխան դրամական գումարի կանխիկ ստացումը՝ բաժնետիրոջ կողմից անձնագրի ներկայացմանը կամ այդ գումարի փոխանցումը բաժնետիրոջ բանկային հաշիվ՝ ըստ բաժնետիրոջ բանկային վավերապայմանների, որոնք գրանցված են Կենտրոնական Դեպոզիտարիայում:

8.7. Բանկը և նրա պաշտոնատար անձինք պատասխանատվություն չեն կրում այն բաժնետերերի շահութաբաժիններ չվճարելու համար, որոնք ժամանակին Կենտրոնական դեպոզիտարիային և Բանկին չեն ներկայացրել ճշգրիտ բանկային վավերապայմաններ:

8.8. Այն դեպքում, երբ բաժնետերը շահութաբաժինները ստանալու համար սխալ է ներկայացրել իր բանկային վավերապայմանները, Բանկը բաժնետիրոջը պատճառված վնասների համար պատասխանատվություն չի կրում: Սույն կետում նշված պատճառներով բաժնետիրոջ մեղքով ոչ ճիշտ փոխանցված շահութաբաժինները Բանկին հետ վերադարձնելուց հետո, ճշգրտված վավերապայմաններով կատարվում է դրանց կրկնակի փոխանցում բաժնետիրոջը՝ այն փաստաթղթերի հիման վրա, որոնք բաժնետերը Բանկին ներկայացրել է գրավոր ձևով՝ հանած փոխանցված գումարի հետ վերադարձման և կրկնակի փոխանցման վրա կատարված ծախսերը:

8.9. Շահութաբաժիններ չեն վճարվում Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսերի դիմաց:

8.10. Բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են՝ դրանցից ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հարկերը նվազեցնելուց հետո:

8.11. Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ Բանկը հանդիսանում է հարկային գործակալ՝ բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելիս: Որպես հարկային գործակալ, Բանկն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

- ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում՝ շահութաբաժինների գծով հարկերի գումարների հաշվարկ, պահում և փոխանցում պետական բյուջե,
- ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ բաժնետերերի կողմից ստացված շահութաբաժնի տեսքով եկամուտների հաշվառում,
- ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և ձևով՝ շահութաբաժինների ձևով հաշվեգրված եկամուտների և պահված հարկերի վերաբերյալ իր հաշվառման վայրի հարկային մարմնին տեղեկությունների ներկայացում,
- ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված այլ գործառնություններ:

ԳԼՈՒԽ 9. ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2007-2008ԹԹ.

9.1. Նախորդ տարիների և Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի (2007-2009թթ.) ցուցանիշները հիմք են ծառայում վստահեցնելու, որ Բանկը բարձր շահութաբերությամբ կգործի նաև առաջիկա տարիներին:

9.2. Ֆինանսական տարին ավարտվելուց հետո Ընդհանուր ժողովի կողմից հաստատվում են Բանկի ֆինանսական հաշվետվությունները և, դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական

կազմակերպության եզրակացությունը ստանալուց հետո, ընդունվում է Բանկի գլխավոր պահուստը համալրելու մասին որոշում՝ Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

9.3. Շահութաբաժինների բաշխումն իրականացվում է՝ համաձայն սույն փաստաթղթով սահմանված կարգի:

9.4. Ընդհանուր ժողովը կարող է ընդունել որոշում՝ Բանկի բաժնետերերին չբաշխված շահույթի ընդհանուր գումարի չափով շահութաբաժիններ վճարելու մասին: Այդ դեպքում Բանկի խորհուրդն առաջարկում է Բանկի բաժնետերերին՝ վճարված շահութաբաժինների առնվազն 85%-ը ուղղել Բանկի կանոնադրական հիմնադրամի համալրմանը:

9.5. Ընդհանուր ժողովը կարող է նաև ընդունել որոշում՝ զուտ շահույթի մի մասը չբաշխված շահույթի ձևով թողնելու մասին: Եթե չբաշխված շահույթի գումարը գերազանցում է Բանկի կանոնադրական հիմնադրամի 50%-ը, ապա այն շահութաբաժինների ձևով բաշխվում է Բանկի բաժնետերերի միջև, որից հետո Բանկի խորհուրդն առաջարկում է Բանկի բաժնետերերին՝ վճարված շահութաբաժինները ամբողջությամբ ուղղել Բանկի կանոնադրական հիմնադրամի համալրմանը: